ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«10» 10 20 24թ.
No 012037

«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՅԱՆՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պող., 36/7, 4/1 բն., էլ. փոստի հասցե՝ tigranharoyan@mail.ru)

Հարգելի՛ պարոն Հարոյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 8-ի ««Հայր և Որդի Հարոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02679/24 վարույթի շրջանակում փորձաքննություն նշանակելու մասին» թիվ 699-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «4» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Մերուժան Խաչատրյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (242)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 22 նոյեմբերի 2024 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հոկտեմբերի 2024 թվականի թիվ 699-Ա

«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՅԱՆՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-02679/24 ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հոկտեմբերի 8-ի նիստում, քննարկելով «Հայր և Որդի Հարոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-02679/24 վարույթի շրջանակում փորձաքննություն նշանակելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 24-ի ««Հայր և Որդի Հարոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 312-Ա որոշմամբ հարուցվել է թիվ ՀԳ-02679/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցվել է Ընկերության վարքագծում հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի սեպտեմբերի 17-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 408-Ա հրամանի հիման վրա 2024 թվականի սեպտեմբերի 20-ին Ընկերությանը պատկանող Կոտայքի մարզ, Ջրաբեր, Երևան-Սևան մայրուղի թիվ 25 հող հասցեում գործող բենզալցակայանում իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 408 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 408 արձանագրություն**):

Թիվ 408 արձանագրության համաձայն՝ Ընկերությանը պատկանող Կոտայքի մարզ, Ջրաբեր, Երևան-Սևան մայրուղի թիվ 25 հող հասցեում գործող

բենզալցակայանից հսկիչ գնմամբ ձեռք է բերվել 3 լիտր ռեգուլյար 92 տեսակի ավտոմոբիլային բենզին (1 լիտրի արժեքը 500 ՀՀ դրամ) (այսուհետ նաև՝ **Ապրանք**):

Հանձնաժողովը 2024 թվականի սեպտեմբերի 23-ին ընդունել է ««Հայր և Որդի Հարոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02679/24 վարույթի շրջանակում փորձաքննություն նշանակելու մասին» թիվ 587-Ա որոշումը (այսուհետ նաև՝ **Որոշում**), որի 1-ին կետով նշանակվել է փորձաքննություն՝ առաջադրելով պարզաբանման ենթակա հետևյալ հարցերը.

1) Որքա՞ն է կազմում «Հայր և Որդի Հարոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող Կոտայքի մարզ, Ջրաբեր, Երևան-Սևան մայրուղի թիվ 25 հող հասցեում գործող բենզալցակայանից հսկիչ գնմամբ ձեռքբերված ավտոմոբիլային ռեգուլյար 92 տեսակի բենզինի օկտանային թիվը.

2) Որքա՞ն է կազմում «Հայր և Որդի Հարոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող Կոտայքի մարզ, Ջրաբեր, Երևան-Սևան մայրուղի թիվ 25 հող հասցեում գործող բենզալցակայանից հսկիչ գնմամբ ձեռքբերված ավտոմոբիլային ռեգուլյար 92 տեսակի բենզինի ծծումբի զանգվածային մասը:

Որոշման 2-րդ կետով որոշվել է փորձաքննության իրականացման համար դիմել Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնին:

Հանձնաժողովը 2024 թվականի սեպտեմբերի 27-ին, ի թիվս այլ ապրանքների նմուշների, Ապրանքի որոշակի քանակ (այսուհետ նաև՝ **Ապրանքի նմուշ**) ուղարկել է Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին՝ Ապրանքի նմուշի օկտանային թիվը և դրանում ծծումբի զանգվածային մասը պարզելու նպատակով:

Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինն իրականացրել է համապատասխան լաբորատոր փորձարկումները և դրանց արդյունքները տրամադրել է Հանձնաժողովին:

Միաժամանակ՝ Վարույթի շրջանակներում պարզվել է, որ ավտոմոբիլային բենզինում բենզոլի ծավալային մասի և արոմատիկ ածխաջրերի զանգվածային մասի ցուցանիշները ևս հանդիսանում են ապրանքի՝ ավտոմոբիլային բենզինին ներկայացվող պահանջներին համապատասխանության կարևոր ցուցանիշներ:

Վարույթի շրջանակներում գործերի բազմակողմանի և լրիվ քննության անհրաժեշտությունից ելնելով՝ Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 11465 գրությամբ Հանձնաժողովը Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնին խնդրել է, ի թիվս այլնի, հայտնել.

1. արդյո՞ք լաբորատոր փորձարկումների իրականացումից հետո Ապրանքի նմուշի մնացորդ պահպանվել է.

2. եթե այո, ապա արդյո՞ք այդ մնացորդը բավարար է ավտոմոբիլային բենզինում բենզոլի ծավալային մասի և արոմատիկ ածխաջրերի զանգվածային մասի լաբորատոր փորձարկումներ իրականացնելու համար:

Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինը 2024 թվականի հոկտեմբերի 4-ի գրությամբ, ի թիվս այլնի, հայտնել է, որ լաբորատոր փորձարկումների իրականացումից հետո Ապրանքի նմուշի մնացորդ պահպանվել է և դրա ծավալը

բավարար է բենզոլի ծավալային մասը և արոմատիկ ածխաջրերի զանգվածային մասը ցուցանիշներով լաբորատոր փորձարկումներ իրականացնելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը 2024 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ՄՊՀ-011849 զեկուցագրով, ի թիվս այլնի, առաջարկել է Ապրանքի նմուշում բենզոլի ծավալային մասը և արոմատիկ ածխաջրերի զանգվածային մասը պարզելու համար՝ իրականացնել լաբորատոր փորձարկումներ:

«Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե փաստական հանգամանքների ուսումնասիրման համար անհրաժեշտություն է առաջանում նշանակել փորձագետ, ապա վարչական մարմինն այդ հարցով դիմում է համապատասխան կազմակերպության ղեկավարին կամ համապատասխան անձին՝ այդ մասին ծանուցելով վարույթի մասնակիցներին:

2. Որպես փորձագետ՝ կարող է նշանակվել համապատասխան բնագավառի գիտելիքներին տիրապետող անձը: Փորձագետն իր ուսումնասիրությունների արդյունքում ներկայացնում է եզրակացություն:

3. Վարույթի մասնակիցները կարող են ներկա գտնվել փորձագետի կողմից կատարվող գործողություններին, եթե ներկա գտնվելը չի խոչընդոտի փորձաքննությանը:

4. Վարչական մարմնի կամ վարույթի մասնակիցների պահանջով փորձագետը պետք է լրացուցիչ պարզաբանումներ տա փորձագիտական եզրակացության վերաբերյալ:

5. Վարչական մարմինը, անհրաժեշտություն դեպքում, կարող է նշանակել նաև ֆիզիկական անձի, տեղանքի, որևէ օբյեկտի կամ առարկայի զննում: Վարչական մարմնի որոշմամբ զննմանը կարող են ներկա գտնվել վարույթի մասնակիցները:

Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 22-ի «Հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը սահմանելու և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 192-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 130-Ն որոշման (այսուհետ նաև՝ **թիվ 130-Ն որոշում**) հավելվածի 11-րդ կետի համաձայն՝ ապրանքները, այդ թվում՝ դրանց մի մասը կամ դրանցից վերցված նմուշներն անհրաժեշտության դեպքում հսկիչ գնում իրականացնելուց հետո ցանկացած ժամանակ կարող են ուղարկվել փորձաքննության:

Թիվ 130-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի գրությամբ ապրանքները ուղարկվում են փորձաքննության, եթե վարչական վարույթ հարուցված լինելու դեպքում առկա է փորձաքննություն նշանակելու մասին Հանձնաժողովի որոշում, իսկ այլ դեպքերում՝ փորձաքննություն իրականացնելու մասին Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի հրաման, բացառությամբ սույն կարգի 15-րդ կետով սահմանված կարգով ապրանքները փորձաքննություն իրականացնողին հանձնված լինելու դեպքերի:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է նշանակել փորձաքննություն՝ Ապրանքի նմուշում բենզոլի ծավալային մասը և արոմատիկ ածխաջրերի զանգվածային մասը պարզելու նպատակով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» օրենքի 45-րդ հոդվածով, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նշանակել փորձաքննություն՝ առաջադրելով պարզաբանման ենթակա հետևյալ հարցերը.

1) Որքա՞ն է կազմում Ապրանքի նմուշում բենզոլի ծավալային մասը.

2) Որքա՞ն է կազմում Ապրանքի նմուշում արոմատիկ ածխաջրերի զանգվածային մասը:

2. Փորձաքննության իրականացման համար դիմել Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2024 թ. հոկտեմբերի 8
Երևան